

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կէս տարւանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրւում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբարբաբները գիտում են ուղղակի
Тифлис. Редакция «Менк»

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնն ընդունւում է ամեն կիցով:

Յայտարարութիւնների համար վճարում են
Խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Շառախոյ:
Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Ներքին
լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Արտաքին լուր-
եր: ՀԵՌԱՊՈՐՏՆԵՐ: — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Նամակ խմբագրին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՐԱԽՈՅ

Հոկտեմբերի 12-ին

Չարմանալի բնաւորութիւն ունեւոր մենք՝ հայ-
աւետարանականներս: Մի որ և է շրջահայեաց և հե-
ռառես անհատի տուած բարի խորհուրդ, մի խե-
ղացի առաջարկութիւն, որ մեր յաւանդողութեան
նպատակով պիտի մեր օգտին ծառայէ, չարաչար
արհամարհում ենք, անհոգութեան ենթարկելով
նրան: Շատ ժամանակ հակառակ առաջարկու-
մին և տուած խորհուրդին ենք դործում: Գաղտա-
ղարակել է մեր այդ տեսակ վարմունքը, դատա-
պարտել է նա աւելի այն ժամանակ, երբ դործը
վերաբերում է ազգայն սերնդի ուսման, կըր-
թութեան:

«Մշակ» ընթերցողները գուցէ կը յիշեն, թէ ինչ-
պէս անցեալ տարի Պ. Ս. Թաւադեանց և ուրիշ-
ները բողոքում, զանգաւում էին մեր Բագուի ու-
սումնարանի հայ ուսուցչի դէմ: «Հարկաւոր է,
կրկնում էին նրանք, մեզ խնայել մեր մանուկ սե-
րունդը, հարկաւոր է մեզ ունենալ մի դարգացած,
բարեխիղճ, գործունէ և մանկավարժական ամե-
նակարգութեամբ կանոններին ծանօթ հայ ուսուցչի»:
Երբ էին զոյգ ասածները և մենք, գաղափարա-
կից լինելով այդ պարունակին, սպասում էինք
կատարելա յուսով այս յայտնված մտքերի իրա-
դրոման: Բայց իսկույն մեր յոյսերը ապարդիւն են
անցնում:

Նախկին ուսուցչին իր պաշտօնից հրաժարե-
ցում են. նրա տեղ վարձում են մի ուրիշը: Դա-
նօթմանով այդ վերջինի հետ կարելի է գաղա-
փար կազմել, թէ ինչ առաւելութիւններ ունի սա,

որոնցից դուրի էր առաջինը և թէ ոչման է ա-
ռան իր պաշտօնին և կոչմանը այդ երկուստեղը:
Մենք, իբրև մօտ ծանօթ երկուստեղին, քաջ
գիտենք, որ սա Շառախոյ հայ-աւետարանականաց
զպրոցում տարրական ուսում ստանալուց յետ,
ապրել է մի քանի տարի Ռուսաստանում, որտեղ
և սովորել է ռուսերէն խօսելը, վերադառնալով
այնտեղից Բագու, նախ պարապել է մի երկու
տարի մանրավաճառութեամբ, յետոյ եղել է գրա-
պահ Բագուի Մարգար. ընկեր. գրադարանում և
ապա գործակատար նախագործարարներին մօտ: Իսկ
այժմ, զգլխով յիշեալ պարապմունքներից և ու-
սուցչութիւնը աւելի նպաստաւոր համարելով նիւ-
թականին, յանձն է առել մանկավարժութեան
գործը, որ բացի շահանդուրութիւնից պահանջում
է և ուրիշ շատ բաներ, որոնցից դուրի է ինքը:

Այժմ Բագուի բոլոր հայ-աւետարանականները,
բացի մի երկուսից, իրանք էլ կը խօստովանեն,
որ փոխանակ «ուրիշ ընկեր» աչքն էլ քուռա-
ցրին: այդպիսի ուսուցչի վարձելով, բայց երբ կը հա-
ցնեն, թէ ինչպէս հարկաւորված այդպիսի ծիծաղելի
ընտրութիւն արին. «մենք է, հայ-աւետարանական
է, ուրիշ չէ, պէտք է նա էլ ընչ լաւ ապրի» կը
պատասխանեն անշուշտ քեզ: Պարզ է, որքան, որ
միջանում էլ «մարդն է գործի համար, ոչ թէ
գործը մարդու համար»:

Բայց մեզ դարմացում է մի բան. ինչ է անում
ընտրութեան ժամանակ Բագուի մեր խնայելիցն-
ցիւն, ինչով էին դրադած այդ անբախտ ուսում-
նարանի սիրահարները, ինչու չէին դործում նո-
րանք:

Վերջացնելով նամակս, մնում է ինձ դանդա-
ղել մեր հոգաբարձութիւնից. թող այդ պարունակը
մի փոքր լաւ չափին, կշռեն իրանց պարտա-
ւորութեան վրէժ և սուրբ կողմերը և ընդհանուրի
չափը անհատի օգտին ծառայեցնելու համար չը
յանձնեն ուսման, կրթութեան ծանր դիմել մի
իրան պաշտօնին անյարմար և անփորձ երկուս-
տեղի:

Հայ-Աւետարանական

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 9 հոկտեմբերի

Չքաւոր երկուստեղների դրութիւնը, որոնք կեւած

Բնաւ ոչ: Նրանց ասածները միայն իմ մէջն էլ
մի քանի մտածութիւններ դարձեցին:

Նախ դառնում եմ դէպի «Մեղու Հայաստանի»-ի
յօդուածը: Ես բնաւ առիթ չունեմ զգուշ լինելու,
որ «դանիւնը կիսով չափ դատարկ էր», որովհետեւ
ես չը կարողացայ չը նկատել, որ ներկայ գտնվող-
ները ուղարկութեամբ հետեւում էին իմ ասածներին:
Ես կարող էի միայն դարմանալ, որ համալսարա-
նականները ոչ աւելի քան մի տաս մարդու չափ էին
ներեացել և այդ իրողութիւնը միայն դրանով մեկ-
նել, որ այդ պարունակներն ամեն բան, որի մասին
ես պէտք է խօսէի առաջուց էլ յայտնի էր և այդ
պատճառով ոչ ինչ հետաքրքրական չը պիտի ներ-
կայացնէր: Թէև ուրիշ կողմից այն էլ պէտք է
աւելացնեմ, որ այլ երկուստեղում ոչ մի մարդ չի
ասի, որ նրան բնաւ հարկ չը կայ ներկայ գտնու-
մի մի դասախօսութեան, «որովհետեւ դասախօսը
ինչ կարող է ասել, որ իրան յայտնի չը լինէր»:
Ես գոնեա ծանօթ իրողութիւններ էլ լսելով կա-
րող եմ նրանցից նոր տեսակետներ սովորել:
Գարձեալ, կրկնում եմ, ինձ կարող էր դարձա-
ցնել և այն խմբի բացակայութիւնը, որ կողմաստ
սովորական է «խնայելիցն» անուանել, բայց
ան ձն ապէս և վշտացնել ինձ այդ իրողութիւնը
անկարող էր: Ինձ վշտացնում է միայն այն, որ
մեր «խնայելիցն» գուրի է բարբոթին բնա-
կան ձգտումից՝ հետաքրքրվել մեր երկրում և ու-
սումնասիրել նրան, *) ինձ վշտացնում է, որ ու-

*) Իմ այս խօսքերիս թող ապացոյց լինի այն
անհրաժեշտ իրողութիւնը, որ հարկաւոր համա-
լսարանականներից ոչման սակաւաթիւ են այն ան-

են այլ և այլ քաղաքներից և գիւղերից տեղիս պե-
տական և ազգային ուսումնարաններում սովորե-
լու համար, քանիցս անգամ դարձել է իր վրա
պատուական «Մշակ» ուղարկութիւնը:

Մի քանի անգամ յարուցվեցաւ օտարական աշա-
կերտների համար մի ճաշարան բաց անելու խն-
դիրը, բայց և այնպէս այդ հարցը մնաց լուր հարց:
Այստեղ սովորող օտարական աշակերտների մեծ
մասը կարելի է չքաւոր համարել, որովհետեւ նո-
ցանից իւրաքանչիւրը, ծնողներից, դասերից և թէ
այլ և այլ կողմնակի աղբիւրներից, միջին թիւով
առած, ստանում է ամսական 15 բուրլ:

Այդ գումարից դուրս գալով այլ և այլ ծախքերը,
աշակերտին մնում է 5—6 բուրլ ճաշարան համար:
Ամսական 5—6 բուրլ գումարով տեղական սուր
հիւրանոցներում, բէստօրաններում կարելի է ստա-
նալ ճաշ մէկ կերակուրից բաղկացած:

Հիմա ես կը դարձնեմ ընթերցողիս ուշա-
դուրսութիւն այն բանի վրա, թէ արդեօք ինչ կե-
րակուր կարելի է ստանալ 15 կամ 20 կոպ. մի
որ և իցէ պանդուխտ (харчевня): Գուցէ ըն-
թերցողը, որին չէ պատահել երբեք ուղարկու-
թիւն դարձնել այդպիսի բաների վրա, կը դժուա-
րանայ պատասխանել այդ հարցին, այն ժամա-
նակ ես կասեմ, որ 15—20 կոպ. աշակերտը ստա-
նում է այնպիսի կերակուր, որ կարող է կերա-
կուր համարել 6 ժամ ոչինչ կը կերած աշակեր-
տի համար, և որի համար այդ մի ամսն կերա-
կուրը և նախաճաշի է, և ճաշ է, և ընթերցող: Կար-
ծեմ որ ընթերցողը կարողացաւ հասկանալ ինձ:

Օտարական աշակերտի համար ապրելու այդ
պայմանից յետոյ հերթականը բնակարանի հար-
ցն է: Ես գիտեմ բազմաթիւ աշակերտներ, որոնք
կարողանում են վարձել միմյան սենեակ (Աստուած
սենեակ համարէ) առանց տաքացնելու և ձմե-
ռուայ ընթացքում ստիպված են վերադառնալով
փախածված նստել սենեակում, որոնք փոխարի-
նում են նոցա համար վաւարանը:

Ընթերցողը գուցէ չափազանցութիւն համարի
այդ բոլորը, բայց եթէ նորան պատահէր մի ան-
գամ ներս նայել այդ աշակերտների սենեակնե-
րից մէկի մէջ, նա անշուշտ կը համոզվէր, որ
իմ պատմածները միայն մի սովորական երևոյթ են
այդ սենեակներում բնակվողների համար. նա կը

բնաւ իմ յոյսն տեսնել չուտով մի ընկերութեան
հիմնվելը, որ իրան նպատակ պիտի դնէր ամե-
նաբարձարութեան տեսակետներից ուսումնասիրել
մեր երկրի, որ այնքան արժանի է մի հիմնաւոր
ուսումնասիրութեան, որ իմ այդ յոյսս, ասում
եմ, պէտք է հաշուել անիրագործելի ցանկութիւն-
ների թիւում, գոնեա առժամանակ և մանաւանդ
եթէ մասնակցութիւն և օժանդակութիւն սպասե-
լու լինե՞ր մեր «խնայելիցն»-ից, որին բնա-
կան ապէս և կը պատկանէր առաջնորդի դեր և այդ
գործի մէջ, բայց այդ խմբի (չեմ ուղղում տեսել
գաղափարի) անտարբերութեան համար ես լիովին
վարձատրված էի, իմ դասախօսութեան մէջ ա յայ-
նապակաւորի ներկայ գտնվելով, որ մեր մասա-
րապէս աղքատ կեանքի մէջ միշտ լինում է ամե-
նահաւատարմ ըմբռնող և հետեւող ամեն թարմ
և յառաջադէմ մտքի: Գաւ այն դասախօսքն է, որ
ուղղում է սովորել, յառաջ գնալ, օգտուէտ լի-
նել հասարակութեանը:

Երբեք, որ ես խօսեցի շատ երևոյթների և իր-
ողութիւնների մասին, որոնք գուցէ ունենեցին
բացառաբար միայն անգամ աւելի կատարելա կեր-
պով յայտնի և ծանօթ էր, քան թէ ինձ ինքեանս
այդ ես չեցեցի միջնա անգամ դասախօսութեան
մէջ: Բայց միթէ ես էլ ուրիշների պէս պէտք է
լռելի մեր կեանքի այդ «հանրածանօթ» երևոյթ-

հանքերը, որոնք իրանց նպատակ են դրել երկրի
ուսումնասիրութեան նպատակուն, այն ինչ և շատ
զրադված մարդկանց ազատ ժամերը կարող էին
նուրբված լինել այս կարեւոր և անհրաժեշտ
գործին:

տեսնել, որ կան այնպիսի պայմաններ այդ խեղ-
ճերի կեանքի մէջ, որոնց դուրսից ներքու, ըստ
երևոյթին, պարագայի դասերով, ընթերցանութեամբ,
զարգանալ միանգամայն անկարելի է: Աշակերտի
ապրելու բոլոր պայմանները մի կողմը դնելով,
հայ հասարակութեան բարօրութեան ասպարէզի
վրա դործող անձինքների լուրջ ուղարկութիւնը
կը դարձնէի օտարական բազմաթիւ աշակերտ-
ների ապրելու գլխաւոր պայմանի վրա, — ճաշ ու-
նենալու վրա: Թող մեր մասուրը նորից բարե-
հաճէ բարձրացնել հայ հասարակութեան ասպա-
րազ անդամների համար մի ճաշարան բաց անելու
հարցը, թող մեր բար և դուր ծախսն ընկերու-
թիւնները չը խնայեն իրանց բարեգործութիւնը
ցոլացնել ուսումնարանները ծարաւող օտարական
հայ պատանիների փոքրիկ խմբի մէջ...

Ստեփան Ղարաբան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 15 հոկտեմբերի

«Մշակ» ընթերցողները կարծեմ դու լաւ յի-
շում են լրագրից № 138 տպված իմ ստորագրու-
թեամբ խմբագրիչ ուղղած մի նամակ, որի մէջ
յայտնել էի Թիֆլիսի հարկատուների վարչութեան
(Мещанская управа) պաշտօնէպ պ. Գաբրիէլ
Շահվերդեանի պաշտօնավարական կեանքից մի
փոքրիկ գեղձում: Նոյն լրագրի № 151 տպվեցաւ
պ. Շահվերդեանի պատասխանը իմ նամակի դէմ:
Ես երբեք չէի ցանկանալ պարտի հետ լրագրական
վէճ բանալ և ընթերցողներին ծանօթացնել, բայց
որովհետեւ պարտը իմ պատասխանով աշխատում
է մուրեցնել ընթերցողներին, այդ պատճառով
կը խնդրեմ խոտարնաբար, յարգելի խմբագրի,
ներկայ գրութեան հիւրընկալել ժողովրդական շա-
հերի և իրաւունքների պաշտպան «Մշակ» մէջ:

Յայտնի է, որ լրագր միշտ ատելի է խաւարա-
սերներին և լրագրական լուրի միջոցով ցոյց տված
պ. Շահվերդեանի գեղձումը, որպէս մի ճշմարտու-
թիւն խոցեց նրա սիրտը: Իմ նամակը «Մշակ»-
մէջ տպված օրը ծանօթ թէ անծանօթ դիմում են
պարտին և շատերը դիմումով խօսում են նամա-
կի բովանդակութեան մասին: Պարտը սաստիկ

ների մասին, երբ համոզված եմ նրանց կարեւո-
րութեան մասին և միևնույն ժամանակ տեսնում
եմ, որ նրանք շատ սակաւ արձանագրված են—
Թող այնպէս անկատար կերպով արձանագրված
լինին, ինչպէս առ ժամանակ արեցի ես, բայց բո-
ւորովին չը կորչեն ժամանակների մոռացութեան
մէջ: Գիտեմ մի բան, որ կարեւոր է և իր հա-
մար պահել նրան—դա անհրաժեշտ յանգանք է ազ-
գային պատմութեան առաջ: Ուրեմն ինչի մասին
խօսեմ, եթէ լուրը այն բանի վրա, որ մեզ ծա-
նօթ է: Միթէ պէտք է խօսեմ այն բաների վե-
րա, որոնց մասին հասկացողութիւն չունենք—
Այդ ինձ յիշեցնում է մի ֆրանսիացու պատմու-
թիւն, որ ձմեռ ժամանակ ճանապարհորդում էր
Ռուսաստանում: Մի գիւղի մօտենալով նրա վրա
թափվեցան կատաղի շներ: Ճանապարհորդը անձ-
նապաշտպանութեան համար ուղեցաւ մի քանի
քարեր բաղել գետնից, բայց որին էլ ձեռք չը տա-
լիս, բոլորն էլ գետինն սառած էին: Իր յուսահա-
տութեան մէջ ճանապարհորդը վերջը բացառա-
նէց՝ «դա ինչ դարմանալի երկիր է, որի մէջ ամեն
բան թարա է, ուր չես կարող անալ և թողնում, իսկ
քարերը գետինն են կապում»: Արդեօք մեր եր-
կիրն էլ «թարա» չէ, ուր մարդիկ սովորաբար
լուռ են այն բաների վերա, որոնք նրանց յայտ-
նի են, իսկ խօսում են ամայնութիւնի մասին, որոնց
մասին տեղեկութիւն չունեն:

«Մեղու Հայաստան» անկախ ճամակրու-
թիւնով վերաբերվում է դէպի իմ դասախօսու-
թիւնը, բայց ես ցաւում եմ, որ նա ինձ գովելու
դիտաւորութեամբ դիմել է մի անհամակրական մի-

վերաբերած մտադրում է դատ բանալ «Մշակի» խմբագրի դէմ, որ նա համարձակվեցաւ իր դէմ նամակ տպելու, բայց նրան հասկացնում են, որ դա աւելորդ է, մինչդեռ նամակի հեղինակը յայտնում է պատասխանատուութեան պատրաստակամութիւն: Նա նախ ցանկանում է լրագրով պատասխանել, բայց ինչ անէ, չը նայելով որ հայ է, բայց ոչ միայն գրել, այլ և կարգին հայերէն խօսել չը դիտէ: Գիտում է այս և այն պարունի օգնութեան, բայց շատերը զննելով բանի էութիւնը մերժում են իրանց ծառայութիւնը: Պարոնը տեսնելով իր դրութիւնը, մտադրում է դործը խաղաղութեամբ վերջացնել, և այդ առիթով լուրեր է տարածում, թէ կամենում է դատ բանալ և յօդուած է պատրաստում իմ դէմ, որպէս զի ես վախենալով սպառնալիքից հրապարակաւ ներողութիւն խնդրեմ պարտնից և խոտտովանեմ իմ սխալը: Բայց երբ այդ էլ չէ յաջողում, նա դարձեալ որոնում է և վերջապէս գտնում է մի գրագիր: Գրա մէջ պէտք է որոնել այն պատճառը, որ սեպտեմբերի 27-ին տպված նամակին նա հալիւ կարողացել է պատասխանել հոկտեմբերի 10-ին: Նա իր գրագրին յայտնում է իր դարձերը. իսկ այս վերջինս գրում է պատասխան իմ նամակի դէմ, բայց այդ պատասխանով պ. Գ. Շահվերդեանը փոխանակ արդարանալու աւելի էլ հաստատում է իր յանցանքի մէջ. պարոն գրագիրը իր հերոսին մատուցանում է արջի ծառայութիւն: Ահա թէ ինչպէս: Իմ նամակի մէջ ես չեմ յիշել անցադիր կամացող երիտասարդի և նրա բարեկամների ազդանունները, իսկ պ. Շահվերդեանը յայտնելով նրանց ազգանունները ապացուցանում է իր յանցանքը, որովհետեւ նա ինչ գիտէր թէ ես ձր երիտասարդի մասին էի գրել, իսկ պարոնը կարգաւորով նամակը իսկույն յիշել է թէ ձու հետ է գործել զեղծումը և յայտնում է նրանց ազգանունները: Չը մոռանաւ յիշելու, որ իմ նամակը «Մշակի» մէջ տպված մի և նոյն օրը պ. Շահվերդեանը յայտնում է իր անբաւականութիւնը երիտասարդի բարեկամին: Պարոնը իր պատասխանի մէջ խօստովանում է, որ թագադրութեան հրովարտակով ապառիկ հարկերը ներկած էին և այդ մասին խօսել է երիտասարդի հետ, իսկ միւս տեղում ասում է, որ երիտասարդը նրան ներկայացաւ մարտ կամ ապրիլ ամսին: Ամենքին յայտնի է, բայց պ. Շահվերդեանից, որ թագադրութիւնը և հրովարտակը տեղի ունեցան մայիս ամսին, ուրեմն պարոնը ինչպէս կարող էր մարտ կամ ապրիլ ամսին երիտասարդի հետ խօսել հրովարտակի մասին. պարոնը կամ լաւ յիշողութիւն չունէ և կամ այնքան տգետ է, որ ամիսները միմեանցից զանազանել չէ կարողանում: Պարոնը մի այլ տեղում ասում է, որ երիտասարդը պէտք է վճարէր 1883 թ. ամբողջ հարկը, իսկ ինձ որքան յայտնի է մարտ կամ ապրիլ ամսին զեռ 1883 թ. հարկերը գրված չէին, և մինչև այսօրս էլ զեռ գրված չեն, մանաւանդ որ, երիտասարդը

նոր հասակաւոր համարվելով պէտք է առաջին անգամ սկսէր հարկ տալ: Պարոնը նոյնպէս սուտ է ասում, որ երիտասարդը պահանջել է տարեկան անցադիր. իրաւ է սկզբում կամեցել է տարեկան, բայց յետոյ միայն երկամսեայ, բայց պ. Շահվերդեանը պատասխանել է, որ զանազանութիւն Միւս մանր մուր հարցերը թէ, ոչ թէ այսքան կուպէլ այլ այնքան, որոնց մեծ նշանակութիւն է տալիս պարոնը, եւ ընթերցողներին չը ձանձրացնելու համար թողնում եմ առանց զննութեան, որովհետեւ զխառը հարցը ոչ թէ դրանց մէջն է կայանում, այլ նրանում որ պ. Շահվերդեանը օրէնքի հակառակ պահանջ է յայտնել երիտասարդին: Հարցնում եմ դարձեալ, եթէ երիտասարդի բարեկամը կարող էր 3 ր. 10 կ-ով անցադիր ստանալ, ինչու նոյնը չը կարողացաւ ինքը երիտասարդը: Ասում են, որ այդ բանը խաթրով է եղել: Սրա հետ պնդում եմ, որ իմ նախընթաց նամակի մէջ յայտնած բոլոր կէտերը, կատարելապէս ուղիղ են առանց բացառութեան, և ես այդ բոլորը կապացուցանեմ, երբ որ կը կամենայ պարոնը: Պ. Շահվերդեանը հաւատացնում է, որ իր դէմ գրածը, զրպարտութիւն է և առաջացել է անձնական կրքից, բայց ես իմ կողմից հաւատացնում եմ պարոնին, որ ես նրա հետ ոչ ծանօթ եմ եղել և ոչ էլ մինչև անգամ ես տեղեկութիւն էլ չունէի թէ աշխարհիս երեսին Գարբիէլ Շահվերդեանց կայ թէ ոչ: Պարոնը ինքն էլ նշանակութիւնը չը հասկանալով, ինձ անուանում է անմտաճառ, անհասկացող, դատարկամիտ և այլն: Պարոնը թնդ միամիտ լինի, որ ես այնքան անմտաճառ չեմ որքան նա կարծում է. եթէ ես անմտաճառ լինէի, պարոնի անիրաւութեան դէմ չէի բողոքի, այլ ամենայն յարգանքով կը խոնարհվի նրա անողորմալի վճիռ առաջ: Հաղար ամօթ այն մարդուն (բացի ի հարկէ ամբոխից), որ Գարբիէլ Շահվերդեանից պէտք է անմտաճառ և անհասկացող լինի: Ուշադրութեան արժանի է և այն կէտը, ուր պարոնը ասում է, թէ խորհրդաւոր գումարը ինքը անձամբ չը պէտք է ստանար, այլ մի ուրիշ, ուրեմն պարոնը կամենում է ցոյց տալ, որ ինքը միայնակ չէր... Այս կէտը ինձ յիշեցնում է հետեալ անէկզօտը: Կովկասի բնակականները կողոպտում են Վրաստանի վանքերից մէկը և անցադտանում են. երկար ժամանակ նրանք մնում են ծածկված: Մէկ անգամ կողոպտողները մէկը մտնում է նոյն վանքը ազօթելու համար: Նա չորքած պատկերներից մէկի առաջ ուշադրութեամբ նայում է պատկերի զմարտութեան: Պատկերի աչքերը տովարկանից աւելի մեծ լինելով, բնականաբար կարծում է թէ իրան է վերաբերում և չգրած տեղից աղաղակում է. «հոյ սուրբ, ինչ ես աչքերդ ինձ վրա չուել, ես հօ միայնակ չէի եկել ընդ կողոպտելու, ես ուրիշ ընկերներ էլ ունեմ»: Ի

հարկէ մտաւայ մարդիկ լսելով նրան կալանաւորում են: Մի տեղումն էլ պարոնը ասում է, որ երիտասարդի վրա կայ 47 ր. 50 կ. տարեկան հարկ, որ կը ստացվի իր ժամանակին: Գրանով պարոնը կամենում է ցոյց տալ, որ ինքը այնպիսի հեղինակութիւն ունի հարկատուների կողմէ վարութեան մէջ, որ իր հակառակորդ երիտասարդին կը պարտաւորեն յայտարարում 47 ր. 50 կ. հարկ վճարել, բայց ես հաւատարմ եմ, որ հարկատուները կառավարութիւնը մի և որ է Գարբիէլ Շահվերդեանից կրքերին բաւականութիւն տալու համար, չի արատաւորի իր պատիւը: Պարոնը խորհուրդ եմ տալիս առանց նշանակութիւնը հասկանալու իր հակառակորդներին չը միայն իրան հակացող չը համարի, որովհետեւ այն դարը անցաւ, երբ պ. Գ. Շահվերդեանցներին նման գրագիրները գիտականների չարքունն էին դասվում: Պարոնը և նրա նմանները թող պստահուեալ մտածեն, որ իրանց դործունէութեան վրա հակողներ կան: Ես այստեղ այժմ մտածում եմ, թէ փոքր ի շատէ հակացող և լրագիր ընթերցող անձանց հետ որ այսպէս են վարվում, արդեօք ինչքն չեն անի տգէտ ամբօթի հետ, որոնք ոչ լրագիր են կարդում և ոչ տեղեկութիւն ունեն թէ հրովարտակի և թէ իրանց իրաւունքների մասին: Պարոնին դարձեալ խորհուրդ եմ տալիս համառութեամբ, որովհետեւ հակառակ դեպքում գուցէ դործը այնպիսի կերպարանք ստանայ, որ նրան պաշտպանելու համար հարկաւոր լինի ոչ թէ մի, այլ զուցէ մի քանի գրագիրներ: Իր նամակի վերջերում պարոնը յայտնում է, որ ինքը լաւ գիտէ դատարանի ճանապարհը, ուրեմն կը յուսամ, որ նա այդ ճանապարհով կը սկսի ընթանալ և «Մշակին» ընթերցողներին կազատի լրագրական վէճի ձանձրութիւնից:

Կոռնոս

Ն.Ի.Բ.Ի.Ն. Լ.ՈՒՐԵՒ

Ուրբաթ օր, հոկտեմբերի 14-ին, Արժուոյնութեամբ Բոս սիրողները տուեցին բարեգործական նպատակով մի ներկայացում: Գահինք լի էր թիֆլիսի, թէ ուսու և թէ տեղական բարձր դասակարգի, ամենախաղաղ հասարակութեան: Ներկայ էին ներկայացմանը Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկողայ Միխայլովիչ և նոյնպէս կովկասեան կառավարչապետ իշխան Գ.Օնոպուկով: Կօրակույ: Լծմանը լի էին գեղեցիկ կանանցով:

Մեղ ուղարկված է հետեալ նկատողութիւնը տպագրելու համար: «Մեր երկրի հայաբնակ և թուրքաբնակ զեղեղրում սաստիկ տարածված է

ջոցի՝ այն է յարձակվել անխտիր այն պարոնների վրա, որոնք ինձանից առաջ առիթ են ունեցել դատախօսել թիֆլիսի հայ հասարակութեան համար, այն ինչ ես համոզված եմ, որ նրանք էլ նոյնպէս մի գլխաւոր նպատակ աչքի առաջ ունենին՝ օգտակէտ լինել հասարակութեանը և նրա մէջ զրդել նոր մտքեր և ձգտումներ:

Վերջապէս մի քանի խօսք «Արձագանքի» յօդուածի մասին են, որպէս զի պարզեմ յօդուածագիրն և իմ մէջ ըստ երեւոյթի պատասխան մի տարաձայնութիւն: Այն ինչ պ. յօդուածագիրը խնդրեմ հաստատում է, որ Եւրօպայից եկած գումարները արագապէս դարգացրին հայ զիւղերի մէջ մի առաջ չեղած բարօրութիւն, որ եւրօպայիցների գումարների, կանոնաւոր անտեսութեան, կանոնաւորապէս վարձ վճարելու, չնորհով հայ զեղեցիկն սովորել է աշխատել և ընտելացել է աշխատանքին, նա այնու ամենայնիւ, ըստ երևոյթին, ցատում է, որ այդ գումարները օտար են և ոչ տեղացիների գրգռից յարաջ եկած: Բայց այդ, իմ կարծիքով, անտարբեր է, որակից են դալիս այդ գումարները: Գլխաւոր բանը այն է, որ այդ գումարները տարածվին ժողովրդի մէջ: Գուցէ մինչև անգամ նպատաւոր է մեր այժմեան տնտեսական դրութեան մէջ, որ այդպէս լինի, որ աւել ուրիշ գումարներ մտնեն մեր երկիրը, այնպիսի գումարներ, որոնք այդ երկրից չեն, որոնք օտար են: ձշմարիտ է այս գումարները մեր երկրում ծախսվելուց յետոյ նրանցից առաւել մեծ հարստութիւններ գոյց արտաձայնում են և դուրս են օտար ձեռնարկողների երկրի մէջ օգուտ բերելու, նրան

հարստացնելու, բայց այնու ամենայնիւ նրանք կատարում են մի մեծ դեր և մեր երկրի մէջ և այդ է որ մեղ հետաքրքրում է: Նրանք կատարում են այն, ինչոր մեր գումարները երբեք չէին կարողանայ կատարել, որովհետեւ մեր երկրում սեփական կամ գումարներ չը չը կան: Մեծ արդիւնաբերական ձեռնարկութիւններ անայն արուեստների պէս չեն, որ փոքր ծախսերով բաւականանային: Սիմէն եղբայրները, ասում են, մինչև այժմ իրանց Գետաբակի գործարանի վրա 3 միլիոն թուրք ծախսեցին: Ուր եւ փոքր ի շատէ սրան նման մեծ գումարներ մեղմում, ուր եւ մեղ մօտ այնպիսի գումարատէրեր, որ կարողանային մի քանի միլիոն ծախսել առանց կանակաւալու և զիմանալ աչքի առաջ ունենալով ապագայում ստանալիք օգուտը:

Ոչ ցանկանալ ընդհակառակ, որ որքան կարելի է շատ օտար գումարներ ձգվեն դէպի մեր երկիրը և դործ զրկեն մեր բնական հարստութիւնների մշակութեանը: Նրանք կը տարածեն ընդհանուր բարօրութիւն երկրի մէջ, երկիրը ընդհանրապէս կը հարստանայ և այն ժամանակ միայն կարելի է սպասել որ և մեր մէջ կը յայտնվեն մեծ կարողութիւններ: Իսկ այժմ մեղադրել մեր «գումարատէրերին» որ դրանք իրանց ձեռքից խլել են տալիս իրանց երկրի հարստութիւնները անարդար կը լինէր: Կրկնում եմ, մեղ մօտ գումարատէրեր չը կան, իսկ նրանք, որոնց մեղ մօտ սովոր են այդպէս անուանել, ուրիշ երկրներում լոկ չունենոյ: Կամ «ապահոված» մարդու անուն կը կրվին:

Թող դան օտար գումարատէրեր մեր երկիրը, թող մշակեն նրան, թող բարձրացնեն նրա բնակիչները բարօրութիւնը և թող մինչև անգամ իրանք օգտվեն, հարստանան իրանց ձեռնարկութիւններից—այդ մի արդար վարձ կը լինի այն անաղին օգուտ, որ նրանք բերած կը լինեն մեր երկրի ազգաբնակչութեանը:

Եւ վերջապէս, ինչ է նշանակում «օտար» գումարատէր: Նա գալիս է իւրեւ օտար, բայց դառնում է մեր, որովհետեւ ոչ ոք չի ուզում այդպիսի երկրով չուպել անաղին գումարներ—մի երկրի մէջ նշանաւոր ծախքեր անելով գումարատէրը կապված է երկրի հետ, նրա օգուտները անրաժան են երկրի օգուտներից: Նրան մշակների պէտք են և ահա նա դատարարվում է մշակների մի ամբողջ սերունդ, զարգացնում է մեր դէպի աշխատանք, նրան ճանապարհներ հարկաւոր են և նա շինում է ճանապարհներ կամ գոհեա նպատակում է նրանց շինվելուն և այլն: Իսկ դա միթէ մի նոր հարստութիւն չէ երկրի համար յարմար ճանապարհներ ունենալ, ունենալ բանւորների մի կրթված, աշխատասէր, հասկացող, վարժված դաս, որ սովոր է աշխիւ կերպով աշխատել, որ պահանջ ունի աշխատելու, որ սէր ունի դէպի աշխատանք, որովհետեւ աշխատանքն է նրան տալիս կենքի բարօրութիւն, զարգացրել է նրա մէջ պահանջ առաւել մարդավայել կերպով ապրելու, որովհետեւ աշխատանքն է որ նրան բաւրոյապէս էլ առաւել գումար է բարգաւոր: Գարձրել: Ուրեմն մի և նոյն չէ որակից են դատարարներ, որոնք այդ հետեանքի են հասցնում ամբողջ երկրի ազգաբնակչութեան:

Համեմատել բան է, իմ ստանալ վերաբերվում է

լինում ծաղիկի հիւանդութիւնը: Առհասարակ մեր զեղեղրում ծաղիկ չեն կտրում և ժողովուրդը նախապաշարված է ծաղիկ կտրելու դէմ: Բայց այդ նախապաշարմունքը իր հիւնքն ունի. բանը դրանումն է, որ մեր զեղեղրում ծաղիկ պատուաստողները ծաղիկ հիւթը վերցնում են ոչ թէ կովի կամ հորթի ծաղիկից, այլ մարդու ծաղիկից: Իսկ այդպիսով շատ անգամ նոյն իսկ ծաղիկի հիւանդութեան տարախոտիկ լինելու ժամանակ մի տղայից միւս տղային ծաղիկ հիւթը պատուաստելով ոչ թէ առաջն են առնում ծաղիկի հիւանդութեանը, այլ աւելի եւս նպատակում են նրա զարգացմանն ու տարածմանը: Թէ հասարակ ժամանակ և թէ ծաղիկի հիւանդութեան տարախոտիկ լինելու ժամանակ, պէտք է մանուկներին պատուաստել ոչ թէ մարդկային ծաղիկ, այլ կովի կամ հորթի ծաղիկ:

Մի քանի տեղերից մենք ստացանք համակրական նամակներ և հեռագիրներ մեր լրագրում տպված պ. Ֆաւստոսի յօդուածի առիթով, որ մի պատասխան է պ. Հայկունու կրիտիկային:

«Կենդանիների հովանաւորութեան» թիֆլիսի ընկերութիւնը հրաւիրում է հոկտեմբերի 20-ին, երեկոյան 7 1/2 ժամին, իր անդամներին չնորբեր ընկերութեան ընդհանուր ժողովին, որ լինելու է Գիւղատնտեսական ընկերութեան բնակարանում, Ալեքսանդրեան այդում գտնված տան մէջ: Մուտքը թոյլ է տրված և հիւրերին: Այդ ժողովում ընկերութեան պաշտօնական անձանց ընտրութիւնը կը կատարվի, իսկ պ. Իսելին կը կարդայ մի գեղեցիկ հետեալ վերնագրով. «Թուչներին նշանակութեան մասին բնութեան մէջ»:

Հատարակութեան մէջ այս ու վախով, բերանից բերան պատմվում է հետեալը: Հուշակաւոր բմբուխ, Գլղանեցին, յաղթվեցաւ մի հասարակ բազմեցի պարսկից: Պարսիկը «կեց ամսական» (ալթի ալու) մակարտն է կրում Այսուհետեւ կը հանգստանան ժողովրդի զրպանները և մեր փողոցի երեխաներն էլ փոխանակ միմեանց մէջ մենամարտելով, միմեանց չորերը զգգելու ու քարերի վրա զլինելը ջարդելու, ուսուցմարան կերթան:

Ասիական, Ասիական մեղ գրում են: «Նորեկ գաւառական բժիշկ պ. Զէլինսկի, շատ բարեխղճաբար վարում է իր պաշտօնը: Կան մարդիկ, որոնք ջանում են յարգել թշվի վարիկ վայր գցել, բայց այդ նրանց չի աշողկի:

Մասնաւոր նամակից քաղում ենք հետեալ տեղեկութիւններ թիւրքաց Հայաստանի մասին: Նրա կարագրելով թիւրքաւարտակ հայերի կրած տառապանքները, նամակագիրը ի միջի այլոց

միայն այնպիսի գումարատէրերին, որոնք դալիս են ոչ միայն մի երկրի ոյծերը սպառնալու համար, ոչ իւրեւ մերին, որ անցած տեղերը աւերած է թողնում: Զգրելով դէպի մեր երկիրը կապիտալիստներին, մենք անշուշտ պէտք է աչքի առաջ ունենանք պիւնդ (սօլդ) գումարատէրերին և ոչ բաղաւաղներին: Բայց այդ վերջինները սովորաբար միայն կեղծ գումարատէրեր են, առանց գումարի և ուրեմն, եթէ օգուտ չեն կարող բերել մեր երկրին, առանձին վեաւ էլ չեն տալ, որովհետեւ ոչինչ ձեռնարկել էլ անկարող կը լինեն և չուտով դիմակ վեր կը գցեն: Իսկ սօլդ գումարատէրերը մինչև անգամ ետական էլ լինելով միայն իրանց օգուտն աչքի առաջ էլ ունենով միայն, այնու ամենայնիւ մեծ օգուտներ կը բերեն երկրին և իրանց սեփական օգուտի համար անխնայ չեն սպառի երկրի թանկագին մթերքը:

Պ. յօդուածագիրը իրաւացի կերպով ասում է, որ իմ դատախօսութեան մէջ Հայաստանի մասին լրագրականութեան և աւելի մանրամասն նրա կարագրութեան կարօտ էին, հարեանցի կերպով միայն յիշատակվեցան որովհետեւ չէին կարող առաւել մանրամասնօրէն յիշատակվելու մի դատախօսութեան մէջ, կաւեացնեմ ես իմ կողմից: Եւ այս է պատճառ, որ ես այս յօդուածովս յայտարարում եմ, որ իմ կարծիքով անչափ կարեւոր է որ ի վերաբերմամբ ես չէի ցանկանայ, որ այն հասարակութիւնը, որ ինձ պատիւ արեց իմ գրած տառախօսութեան մէջ մնալ իմ բռնած տեսակետի մասին:

Անդր. Արծրունի

միտադիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՎԻՆՆԱՅԻ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ ՄԱՆԻ

ԲԱԹՈՒՄ, ՏՈՒՆ ԹԱՅԻՐՈՎԻ

Մեծ քանակությամբ ապրանքների պահեստ և վաճառատուն, ուր գտնվում են մեծ քանակությամբ ամեն տեսակ կոշիկներ-ոտնամաններ, գուլպա-չուլքիք, հովանոցներ-զոնտիկներ, հագուստներ աղամարդի և կանանց, աղյուխներ-բաղդալիք կովկասի ձաշակով, շապիկներ, ժամացույցներ, ոսկե և արծաթե: Ամեն տեսակ սպիտակեղեններ (շուշեղեն), որպես են ստաքաններ, վաղեր և այլն: Նոյնպես և դանակներ, պատասաքաղներ-դեղներ, ֆրաժի ֆարբիկից և հասարակ տեսակներից, կոճակներ, քաթմանեղեն, գլխարկներ և այլն և այլն ամեն ապրանքից գտնվում են մեծ քանակությամբ շատ տեսակներով: Մտնվում են ֆարբիկի գնով և առանց աւելցուլի (без-запроса): Ընդունում է պատեհներ օտար քաղաքներից ամեն տեսակ ապրանքների:

Հասցեն БАТУМЪ, Мани, д. Таирова.

ՄԱՆԻ

ՖԱՆՆԱԿԱՆ ՇՈՒՆՆԵՐ

ARMÉNIE (ԱՐՄԵՆԻԱ)

«Ն. ՊԱԿԵ ԵՒ ԲՆԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՆԿԱՅԻՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԻՆՈՒԹԵԱՆ ՓՈԹԻՅԵ ԿԵՐԱՊԱՏԱՅ ԶԱՐԲԱՐԺ ՕՐ, 22-ին հոկտեմբերի, և ՓՈԹԻՅԵ ԿԵՐԱՊԱՏԱՅ ԶԱՐԲԱՐԺ ՕՐ, 22-ին հոկտեմբերի, իսկ ԲԱԹՈՒՄԻՅ ԿԵՐԱԿԻ 23-ին հոկտեմբերի, զեպի ՏՐԱՊԻՉՈՒՆ, Կ. ՊՕԼԻՍ և ՄԱՐՍԵԼ, եթե եղանակը բարեկապող կը լինի:

Տեղեկությունների համար զիմեջ ընկերությունն աղենամներին, ՓՈԹԻՆՈՒՄ Կ. ԳԱՐԱՆԻՍՈՒՆ ԵՒ Ն. ԲԱԹՈՒՄԻՍՏ Կ. ՀԵՔԻՍԵԱՆՆԵՐ, ԹԻՖԼԻՍԻՍՏ Կ. ԲԸՆՈՒՆ, Արժույնը Գալեթա № 194

5—9

ՖԱՆՆԱԿԱՆ ՇՈՒՆՆԵՐ

MEURTHE (ՄԵՐԹԵ)

«Ն. ՊԱԿԵ և ԲՆԿ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲՆԿԱՅԻՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԻՆՈՒԹԵԱՆ ՓՈԹԻՅԵ ԿԵՐԱՊԱՏԱՅ ԶԱՐԲԱՐԺ ՕՐ, 12-ին հոկտեմբերի և կը վերադառնայ 20-ին հոկտեմբերի ՏՐԱՊԻՉՈՒՆ, Կ. ՊՕԼԻՍ և ՄԱՐՍԵԼ, եթե եղանակը նպատակաւ կը լինի ճանապարհորդութեանը:

Տեղեկությունների համար զիմեջ ընկերությունն աղենամներին, ԲԱԹՈՒՄԻՍՏ Կ. ՀԵՔԻՍԵԱՆՆԵՐ ՄԵԱՆՆԵՐ, ԹԻՖԼԻՍԻՍՏ Կ. ԲԸՆՈՒՆ, Գալեթա Արժույնի № 194.

5—5

ԱՌԱՋԻՆ

ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՄՆ-ԴԱՆՈՑ

(Կոնիս, ՎՈՐՈՆՅՈՎԻ ԱՐՁԱՆԻ ՀԱՆԳԵՊ)

ՀԻՄՆԱԿՆԵՐԸ ԱՄԵՆ ՕՐ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ:

Ունի սենեակներ հիւանդների և ծնունդեկանների համար, օրական 2-ից մինչև 4 մանկեթ և ամսական 50-ից մինչև 100 մանկեթ վարձով: Եթե մեկ հիւանդները վճարում են խորհրդի համար 50 կ.: Հիւանդանոցի բոլոր բժիշկների համարժեքը (կոնսիլիում) համար 3 մանկեթ, չքաւորները անվճար:

Հիւանդները ամեն օր ընդունվում են:

Առաւօտեան 9—12 ժամ, ՆԱԽԱՍՈՐ-ԴԱՆ—վերաբուժական, վնասական և ատամի ցաւերի համար:

10—10¹/₂ ժ. ԲՈՒԿՎՈՎՍԿԻ—մանկական և ներքին ցաւերի:

11—1 ժ. ԿԻՆԲԻՆԻ ՍԱՐԿԻՆԱ-ՇՁԵՐԻՆՆԻՆԱ—կանանց, և երեխայոց ցաւերի:

10—11 ժ. (կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ) ԲԵՅԻ—աչքացաւի:

11¹/₂—12¹/₂ ժ. (երկուշաբթի), ԲԱՐԱՅԵԱՆ—ներքին և ջղային ցաւերի:

Երեկոյեան 5¹/₂—6¹/₂ ժ.—ՆԱԽԱՍՈՐ-ՍԱՐԿԻՆԱ—ամեն օր:

ՍԱՐԿԻՆԱ-ՇՁԵՐԻՆՆԻՆԱ—երեքշաբթի և հինգշաբթի:

ԲԱՐԱՅԵԱՆ և ԲՈՒԿՎՈՎՍԿԻ—չորեքշաբթի և շաբաթ:

Համախորհուրդ (հիւանդանոցի բոլոր բժիշկների)—չորեքշաբթի և շաբաթ—6¹/₂—7¹/₂ ժամը երեկոյեան:

Հիւանդանոցի վերապատեւ ՆԱԽԱՍՈՐ-ԴԱՆ ընտրվում է նոյն հիւանդանոցում:

ՀԱՄԱԽՈՐՀՈՒՐԴ (կոնսիլիում) հիւանդանոցի բոլոր բժիշկների չորեքշաբթի և շաբաթ երեկոյեան 6¹/₂—7¹/₂ ժամը: Հիւանդանոցի բժիշկները ՆԱԽԱՍՈՐ-ԴԱՆ, ԲՈՒԿՎՈՎՍԿԻ, ՍԱՐԿԻՆԱ—ՇՁԵՐԻՆՆԻՆԱ, ԲԵՅԻ և ԲԱՐԱՅԵԱՆ:

КЕЛЕРСКАЯ
УКСУСНАЯ ЭСSENция.

38—50

2. ԳՐԻԳՈՐԻԱՆՑԻ—ԿՈՎԿԱՍԻԱՆ ԳՐԱՎԱՆԱՆՈՅԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴՐԱՎԱՆՈՅԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹԵԱՆ

լոյս տեսաւ.

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ԵՐԵՎԱՆ

«ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ»

անունով աշխատանքներն առաջին մասը:

սին.—ԱՐՁԱԿ:

Կինն է 1 ու 25 կ.

Գումարով առնողներին 1 ու.

Կրթը բաղկացած է 470 մեծադիր էրեխայի:

5—5

ВЪ РЕДАКЦИИ

ГАЗЕТЫ „МШАКЪ“


ПРОДАЕТСЯ БРОШЮРА

НА РУССКОМЪ ЯЗЫКѢ

“ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМІЯНЪ.”


Цѣна 25 копѣекъ.

Соч. Григорія А р ц у н и.



Մի հաղու համար 8 թուրքաց, երկու հաղու համար 14 թ., մահիճներ ծովային խառով լցված 6—9 թ. ԱՆԳԼԻԱՆ ԻՍԿԱՆ ԻՍԿԱՆԻԹԻ ՄԷՋ: Նոյն տեղը մեծ քանակությամբ ԱՄՆԱՆԵՐ, դանակներ պատասաքաղներ և երկաթե ԳՐԻՉԵՆԻ, կողպեքներ, լծերի, աղամարդկանց և կանանց ԹԱՐԵՐ, մատուցարաններ, ԿԼԵՕՆԿԱՍ, բեթոններ, չՐԱՅԱՆԵՐ, ալբոմներ, կոնֆեկտներ, ԹԵՅ 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ:

100—100



ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՅՔՆԵՐ

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՅՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
Բաթում . .	—	8— առ.	Բաղու . . .	—	10—23 առ.
Սամարեղի .	12—2	12—18	Գանձակ . .	12—20	12—48 զիշ.
Բիսն . . .	1—9	1—22	Թիֆլիս . .	7—49	8—31 առ.
Սուրամ . .	6—8	6—11 երեկ.	Գորի . . .	10—56	11—
Միխայլովո .	6—23	6—33	Միխայլովո .	12—26	12—46
Գորի . . .	7—53	8—2	Սուրամ . .	12—58	1—1
Թիֆլիս . .	10—25	11—11	Բիսն . . .	5—54	6—9 երեկ.
Գանձակ . .	6—20	6—39 առ.	Սամարեղի .	7—	7—20
Բաղու . . .	8—8 երեկ.	—	Բաթում . .	11—21 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՅՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ և ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
Սուրամ . .	—	1—38 զիշեր	Թիֆլիս . .	—	3—11
Միխայլովո .	1—50	2—5	Գորի . . .	6—30 երեկ.	6—41
Գորի . . .	4—6	4—30	Միխայլովո .	8—41	8—56
Թիֆլիս . .	8—առաւ.	—	Սուրամ . .	9—8 երեկ.	—

ԽԱՌՆ ԳՆԱՅՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԿԻՒԻ և ՓՈԹԻՒ ՄԷՋ

Կայարան	Գալիս է	Գնում է	Կայարան	Գալիս է	Գնում է
Փոթի . . .	—	8—45 առ.	Սամարեղի .	—	7—30 երեկ.
Սամարեղի .	11—39 առ.	—	Փոթի . . .	10—24 երեկ.	—

Վերականգնեցող ՄԱԿ-ՄԱՍ ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՑՆԸ վերադարձնող: Կինը 2 թ. շիշը, ՓՈՍՏԱՆՑՈՎ ուղարկված 2 թ. 49 կոպ. ԱՆԳԼԻԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ



Մի և նոյն տեղը ԻՍԿԱՆ ԻՍԿԱՆԻԹԻ, մազերը ամրացնող համար, 1 թ. ամանը և վրձին գլխացաւի զէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն 63—100

Մ. Ն. ՏԻՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ ՊԱՇԵՍ

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՄԱՆՐԱԾԱԽՍ

ԱՐՄԵՆԱՍԻ ԲԱԶԱՐ, ԿԱՏՈՒԹԵՍԿԱՑԱ ՓՈՂՈՑԻ ԱՆԿԻՆ, ՏՈՒՆ № 13

ՎԻՆՆԱՅԻ ԿԱՐԱՍԻՔ, զանազան աթոռներ 35 թուրքաց գիւլիք, բաղկաթոռներ 6 թ., զիմաներ 12—25 թ., կաշեկի, մանկական աթոռներ և այլն: ԱՆԳԼԻԱՆ ԵՒ ՖԱՆՆԱԿԱՆ ՄԱՀԱԿԱՆՆԵՐ, ճանապարհի մահաւանդներ, պահարաններ, ծաղիկ սամփաններ: Չեմոզաններ 2 թ. 75 կ.—26 թ., սակիթ-յաժ ձեռքի և ուսի կաշեկու, ճանապարհի սուվաններ, ՀԱՆԱՊԱՐՀԻ ԱՐԿԱՆ 5 թ. 50 կ.—30 թ.:

Սամփաններ, խոհանոցի պղնձե ամաններ, կօֆէյնիկ, լծեյամաններ, ութօններ և աղալու գործիք, գերմանական էմալով ամաններ, ԵՐԵՍ ԼՈՒՆԱԼՈՒ ՄԱՐ-ՄԱՐԻՆԻ ամաններ 40 թ., երես լուսնաւու պղնձե և ժեստի ամաններ:

ՊԱՏԻ ՀԱՅԵԼԻՆԵՐ 9 թ., սուալէտի հայելիներ 2 թ. 40 կ.—13 թ. զանազան մետաղների մոմակարներ 1 թ.—15 թ., սեղանի զգալներ 4 թ. 50 կ. և լծանգ, լծեյի զգալներ ֆրաժեի, մեխիօրի, լեհական և բրիտանական արծաթից աւելի էժան, քան լծե ուրիշ տեղ, դանակներ, պատասաքաղներ 2 թ.—26 թ.:

ՎԱՐՇԱՎԱՅԻ ԿՈՇԻԿՆԵՐ կանանց և մարդկերանց, հովանոցներ կանանց և մարդկերանց, ուսական և անգլիական պողպատե և երկաթե դանակներ, յայտնի գործարաններից, 10,000 հատ անգլիական և գերմանական կողպեքներ 10 կ. և աւելի:

ԲԵՎՈՂԱԿԵՐՆԵՐ զանազան տեսակի 3 թ. 50 կ.—35 թ., պատրօններ բեթոնիչներ համար, հրացան 6 թ. և աւելի, զանազան վեշտիկներ, կշիռքներ: Անգլիական և ամերիկական կեծնիկ 50 կ.—2 թ. արշիւն:

Մշտապէս ունեւ 10,000 ֆ. ԹԵՑ Պօպօլ եղբայրների, կաֆէ ՄԻՔԵԼՍՈՆԻ, լծեյի համար խմորեղեն Էյնեմի, ԲԵՑԵՐԱՐԻ սիգարների, հոտաւէտ ջուր (Օդը-կօլօն) ծխող փողիք, պուդրա, գլիցերինի սապոն և այլն, աւելի էժան քան լծե ուրիշ տեղ:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ զաւանդէյի զանազան ԱՊՐԱՆՔՆԵՐ, ծխախոտի արկղ, դրամարկղ, քաւիներ, սանդղներ, շապիկներ, լայկի ձեռնոցներ կանանց, զինուորական զամէլի ձեռնոցներ, գարուս, լծեյի, բրօնզի և մարմարիծի լծանաքաններ, միտրամաններ, զրիշներ, մոտիաններ, գլխարկներ, սուրբուչ փոստի լծուղի, ծրարներ և այլն:

ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ խցաններ (պրօբկա) հանքային ջրերի, գարեջրի, գինու և զեղատան ապրանքների համար, նոյնպես և ուրիշ առարկաներ: Վերե յիշված բոլոր առարկաները ունեւ մեծ քանակությամբ և ստանում եմ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործարաններից անմիջապէս:

Առարկաներին զիջում և առանձին պայմաններ: Օտարաքաղաքացիք կարող են զիմել. Тифлисъ. М. Н. ТЕРЬ-НИКОГОВОУ. 62—100